ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հասարակագիտություն (9 դասաժամ), ֆիզիկա (9 դասաժամ), կերպարվեստ (3.5 դասաժամ), երաժշտություն (3.5 դասաժամ) առարկաների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3 X4 չափի
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. Ինքնակենսագրություն /Ձև 5/
5. «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/
6. այլ պետությունների քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ /առկայության դեպքում/
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

   Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները հետ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 15:00-ին Ֆանտանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կոտայքի մարզ, գյուղ Ֆանտան, Գ.Ոպանյան փողոց 47:

Տեղեկությունների համար զանգահարել 093-720-725 հեռախոսահամարով: